**Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառ**

1. Գործառույթը ՝ երեխայի ծննդի պետական գրանցման համար գրավոր հայտարարություն տալը, մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը, ՔԿԱԳ մարմինների գործունեությունը կազմակերպումը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի ստեղծումը, վերակազմակերպումը և նրա գործունեության դադարեցումը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կանոնադրության հաստատումը.
2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի N 1699-Ն որոշում, ՀՀ փոխվարչապետ,ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թ. հուլիսի 30-ի N 16-Ն և ՀՀ արդարադատության նախարարի 2009 թ. հուլիսի 29-ի N 144-Ն համատեղ հրաման

Լերմոնտովո համայնքի ՔԿԱԳ/ սպասարկող Վանաձորի /ՔԿԱԳ/

| **Դրույթների անվանումը** | **Պահպանված է** | **Թերի է պահպանված** | **Պահպանված չէ** | **Հայտնաբերված խախտումները** | **Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ** | **Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները** |
|---|---|---|---|---|---|---|
| Երեխայի ծննդյան մասին հայտարարություն տալու անհնարինության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարությունը տալը երեխայի բնակության վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կողմից «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով | **Պահպանված է** | | | | | |
| Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում նաև երեխայի գտնվելու վայրի | **Պահպանված է** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) իրականացումը գրավոր դիմումի հիման վրա | | | | | | |
| ՔԿԱԳ մարմինների գործունեությունը կազմակերպումը այն համայնքի ղեկավարի կողից, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները: | **Պահպանված է** | | | | | |
| Իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը | **Պահպանված է** | | | | | |
| Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կանոնադրության հաստատումը | **Պահպանված է** | | | | | |
| Համայնքային ենթակայության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքի ղեկավարի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ՀՀ օրենքով սահմանված կարգով ստեղծումը և դրա կանոնադրության հաստատումը ապահովելը: | **Պահպանված է** | | | | | |